

**ALBERT-ENGELMANN-GESELLSCHAFT MBH v. AUSTRIA, 2006, Application no. 46389/99,
Ալբերտ-Էնգելման-Չեսելշաֆթը ընդդեմ Ավստրիայի (Մարդու իրավունքների
եվրոպական դատարան)**

Թեմա: զրպարտություն

Ենթաթեմա: երրորդ անձանց կողմից արված հայտարարություններ,
գնահատողական դատողություններ և փաստական տվյալներ

Թեսթը: անհրաժեշտությունը

Սանկցիան: ֆինանսական

Վճիռը: արտահայտվելու ազատության իրավունքի խախտում

Իրավասությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Ավստրիա

Գործի փաստական հանգամանքները.

Դիմումատուն, Ալբերտ-Էնգելման-Չեսելշաֆթ MBH-ը լրագրի սեփականատեր և հրատարակիչ է, որը հիմանդրված է Ավստրիայում: 1996թ. Լրագիրը տպագրել է մի քանի նամակներ եկեղեցու հանրաքվեի շարժման վերաբերյալ: Նամակներից մեկը հիշատակում էր պարոն Պարհամերին /Ջալսբուրգի շրջանային քահանա, Ջալսբուրգի կատեդրալի խորհրդին անդամ, Ջալսբուրգի համալսարանի կանոնական իրավունքի դասախոս/ և նշում էր, որ նա “հեղափոխական” էր և “քննադատում էր եկեղեցին” և մեղադրում էր իրեն “հրապարակայնորեն քննադատելու և հեզնելու համար քահանային շատ վիրավորական ձևով”: Կարծիք էր արտահայտվում նաև այն մասին, որ եկեղեցին քննադատող քահանաները պետք է ազատվեն ազդեցիկ պաշտոններից և պետք է նրանց փոխարեն նշանակվեն այնպիսիները, որոնք իրապես հավատարիմ են եկեղեցուն և քահանային:

Արված հայտարարությունները վերաբերել են Կատեդրալի խորհրդի կողմից տարածած մամլո հաղորդագրությանն ու պարոն Պարհամերի կողմից տրված ռադիոհարցազրույցին, որի ընթացքում, ի թիվս այլ բաների, նա ասել է, որ Holy See-ի դատավարությունը Ջալսբուրգի արքեպիսկոպոսության առնչությամբ դրել է Կատեդրալի խորհուրդը բարոյական կոնֆլիկտի առջև:

1997թ. Պարոն Պարհամերը զրպարտության հայցով դիմել է դատարան դիմումատու կազմակերպության դեմ: Ներպետական դատարանները նամակներում նշված պնդումները դիտել են որպես փաստերի շարադրանք, որը զուրկ էր բավարար փաստական հիմքերից, դրանք վնասել են պարոն պարհամերի հեղինակությունը և դիմումատու կազմակերպությունը հայցվորին հնարավորություն չի տվել հայտնելու իր տեսակետը դրանց շուրջ կամ իրեն հեռու է պահել նամակի բովանդակությունից: Ջալսբուրգի ռեզիդենտ դատարանը վճիռ է կայացրել, որով դիմումատուն պարտավորեցվել է վճարել փոխհատուցում, հրապարակել դատարանի վճիռը և փոխհատուցել հայցվորի ծախսերը: Վճիռը անփոփոխ է թողնվել նաև վերադաս

դատարանների կողմից: 1999թ. Զալսբուրգի արքիպոսկոպությունը հետ է կանչել իր պաշտոնից որպես Գլխավոր քահանա և 2001թ. նշանակվել է Գիտական հետազոտությունների միջազգային կենտրոնի նախագահ:

ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.

Դատարանը գտավ, որ ներպետական դատարանի որոշմամբ՝ դիմումատու կազմակերպությանը փոխհատուցում վճարելուն պարտավորեցնելու վերաբերյալ, միջամտություն է եղել վերջինիս արտահայտվելու ազատության իրավունքի վերաբերյալ: Միջամտությունը նախատեսված էր օրենքով և հետապնդում էր այլոց իրավունքների և հեղինակության պաշտպանության նպատակ: Գնահատելու համար, թե արդյոք Ավստրիական դատարանների կողմից ընդունված միջոցը համապատասխանում էր ճնշող հասարակական կարիքին և համաչափ էր հետապնդվող նպատակին, Դատարանը մեծ նշանակություն է տվել վիճարկվող հայտարարությունների համատեքստին, ներպետական դատարանների կողմից բերված պատճառներին և միջամտության բնույթին: Դատարանը գտավ, որ ներպետական դատարանների կողմից բերված պատճառները վերաբերելի են եղել, վիճարկվող միջամտությունը արդարացնելու նպատակով: Մնում է որոշել այն հարցը, թե արդյոք դրանք բավարար են եզրել թե ոչ: Առաջին հերթին Դատարանը նշեց, որ հայտարարությունները արվել են մի լրագրում, որը հոդվածներ էր հրատարակում եկեղեցական խնդիրների վերաբերյալ և վերաբերում էին կրոնական բանավեճին, որը համապատասխան կրոնական համայնքի շահերին էր առնչվում, մասնավորապես, Եկեղեցական հանրաքվեի շարժմանը: Գործից չի երևում, որ Ավստրիական դատարանները այդ հանգամանքը հաշվի են առել: Հաջորդ գործոնը, որը պետք է հաշվի առնվի դա գնահատողական դատողությունների և փաստական տվյալների տարբերակման հարցն է: Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն: Գնահատողական դատողության ճշմարտացիության ապացուցման պահանջը անհնար է կատարել և խախտում է կարծիքի ազատությունն ինքնին, որը 10-րդ հոդվածով սահմանված իրավունքի հիմնարար մասն է: Երբ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց: Դիմումատու կազմակերպության գործի պարագայում ամսագրի խմբագրին ուղղված նամակով կարծիք էր հայտնվում անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ Կաթոլիկական եկեղեցու շրջանակներում, այդ համատեքստում նկատառումներ էր արտահայտում պարոն Պրահեմերի վերաբերյալ: Ի տարբերություն ներպետական դատարանների Եվրոպական դատարանը այդ հայտարարությունները դիտեց որպես գնահատողական դատողություններ, այլ ոչ թե փաստերի շարադրանք: Այնուհետև,

Դատարանը նշեց, որ այս պնդումների փաստական հիմքը եղել է պարոն Պարհամերի կողմից մինչ այդ արված քննադատությունը Holy See: Ամենայն հավանականությամբ նամակում օգտագործված արտահայտությունները եղել են փոքր ինչ անհավատալի: Դատարանը սակայն հիշեցնում է նաև, որ մամուլի ազատությունը ենթադրում է նաև որոշակի աստիճանի չափազանցության և նույնիսկ սադրանքի հնարավորություն, հետևաբար, վիճարկվող հայտարարությունները պետք է դիտվեն որպես թույլատրելի գնահատողական դատողություններ:

Դատարանը չհամաձայնեց ներպետական դատարանների հետ այն մասով, որ փաստը, որ վիճարկվող հայտարարությունների հեղինակը չէր անհատականացվել և որ ամսագիրը իրեն հեռու չի պահել նամակի բովանդակությունից, առնչվող հանգամանք էր հանդիսանում դիմումատու կազմակերպությանը պատասխանատվության ենթարկելու համար: Ինչպես որ Դատարանը նշել է տարբեր գործերով, մամուլին առաջադրվող ընդհանուր պահանջը սիստեմատիկորեն և ձևականորեն իրեն հեռու պահելու երրորդ անձի կողմից արված հայտարարության բովանդակությունից, ինչը կարող է վիրավորել կամ սադրել այլոց կամ վնասել նրանց հեղինակությանը, համատեղելի չէ մամուլի՝ տեղի ունեցող իրադարձությունների, տեսակետների և գաղափարների վերաբերյալ տեղեկատվություն տալու դերի հետ:

Հետևաբար, դատարանը չի համարում, որ պարոն պարհամերի վերաբերյալ արված հայտարարությունները, որոնք եկեղեցական հարցերի շուրջ իրականացվող բանավեճի համատեքստում էին արվել, չափազանց ձևով ոտնահարել են նրա հեղինակությունը: Այս հանգամանքներում, ներպետական դատարանների կողմից բերված պատճառները միջամտությունը արդարացնելու համար, չեն կարող բավարար համարվել:

Ուստի, տեղի է ունեցել արտահայտվելու ազատության իրավունքի խախտում: